

Reproductive Health Initiative for  
Youth in the South Caucasus



This Engagement is co-financed by the European Union



United Nations  
Population Fund



ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐ ԵՎ ՄԻԱՎՁԻԱՅ

 **IPPF** International  
Planned Parenthood  
Federation 

«ԲԱՆՈՒՆ ԸՆՏԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՔՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱԲԱՏԱԿԱԿԱՆ ԱՄԹԻՎՈՅՈՒ  
IPPF-ի ՀԱՎԱՏԱՍՐԱԳՐԱԾ ԱՆՂԱՍ

 ԼԻՆՇՆԵՔ ԻՐԱԶԵԿ, ԱՊՐՇՆԵՔ ԱՌՈՂՁ

Սեռավարակները խիստ փարածված են ողջ աշխարհում, այդ թվում և Նայասպանում: Դրանք վարակային հիվանդությունների մի համախումբ են, որոնց հարուցիչները հիմնականում փոխանցվում են սեռական հարաբերությունների կամ ինտիմ այլ շփումների ժամանակ: Նույն եկող այդ հիվանդություններն այսօր էլ շարունակում են մնալ բժշկական, սոցիալական և հոգեբանական լրջագույն խնդիրներ, մանավանդ որ դրանք ավելի են «երիտասարդացել», այսինքն՝ մեծ փարածում են ստացել նաև երիտասարդների շրջանում:

Սեռավարակների փոխանցմանը, ըստ վիճակագրության, արդեն հաշվվում են երեք փասնյակից ավելի: Դրանցից հաճախ հանդիպողներից են խլամիդոզը, ուրեապլազմոզը, սուսանակը (գոնոռեա), փրիխտոմոնասը, սեռական հերպեսը և սիֆիլիսը:

Վաղնջական ժամանակներից մարդկության ժառանգած բոլոր այդ սեռավարակներից ամենավարակավորը ՄԻՎՎ/ԶԻՎՆ-ն է, որը ի հայտ է եկել 20-րդ դարի 80-ական թվականներից ԱՄՆ-ում, իսկ մի քանի տարի անց այն արդեն արձանագրվել է շատ այլ երկրներում, այդ թվում և Նայասպանի Նանրապետությունում:

## **1. Որոնք են սեռավարակների փոխանցման ուղիները**

Սեռավարակներով վարակվելու ամենահավանական ուղին չպաշտպանված սեռական հարաբերություններն են: Վարակը կարող է փոխանցվել նաև մաշկային շփման ճանապարհով, օրգանիզմ վարակակիր դոնորական արյան ներթափանցման և սերմի ներարկման ճանապարհով: Չնայած հազվադեպ է պատահում, որ վարակը փոխանցվի կենցաղային առարկաների միջոցով, այնուամենայնիվ դա հնարավոր է, եթե հիվանդ օրգանիզմի կենսահեղուկները թարմ վիճակում հայտնվեն որևէ առարկայի վրա, որտեղից էլ անցնեն առողջ մարդու օրգանիզմ: Չպաշտպանված (այսինքն՝ առանց պահպանակի օգտագործման) սեռական հարաբերությունները, նաև մեկից ավելի սեռական գուգրնկերների առկայությունը

մեծապես բարձրացնում են այդ հիվանդություններով վարակվելու հավանականությունը:

## **2. Ինչ հեղուկների կարող են հանգեցնել սեռավարակները**

Սեռավարակները խիստ անհանգստանալու տեղիք են տալիս, քանի որ ժամանակին չբուժվելու դեպքում կարող են հանգեցնել մի շարք վրանգավոր հեղուկների: Դրանց թվում են անպարզությունը, արտարգանդային հղիությունը, պարբերական վիժումները, արգանդի պարանոցի քաղցկեղը և ներքին օրգանների այլ ախտահարումները:

## **3. Որոնք են սեռավարակների ախտանշանները**

Սեռավարակներով ախտահարված մարդկանց մոտ կարող են ի հայտ գալ՝ փղամարդկանց մոտ՝ միզուկի բորբոքումներ, կանանց մոտ՝ արգանդի վզիկի բորբոքումներ, հեշտոցաբորբ, փարբեր բնույթի հեշտոցային արտազատուկներ, փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդություններ, սեռական օրգանների շրջանում՝ խոցեր, սրածայր և փափակ կոնդիլոմաներ, ինչպես նաև կարող են առաջանալ լյարդաբորբ (հեպատիտ), սրամոքս-աղիքային փրակների խաթարումներ, փարբեր բնույթի մաշկային ցաներ, լիմֆատիկ հանգույցների մեծացում փարբեր մարմնամասերում՝ կախված սեռավարակի բնույթից և այլն:

## **4. Ինչ հիվանդություն է սիֆիլիսը**

Դա հնուց հայտնի և բավականաչափ լուրջ հիվանդություն է, որը ժամանակին չբուժվելու դեպքում ախտահարում է մարդու առանձին օրգաններ ու համակարգեր և կարող է ավարտվել կորույթյամբ, սրտի, նյարդային համակարգի հիվանդություններով, ուռուցքների հայտնվելով, ի վերջո՝ հիվանդի մահվամբ: Միֆիլիսով կարելի է վարակվել հիվանդ մարդու հետ ինչպես սեռական, այն-

պես էլ մաշկային շփման դեպքում, եթե վերջինիս մոտ առկա են կլինիկական արտահայտություններ:

Սիֆիլիսի հարուցիչը փոքրիկ պարուրաձև մանրէն է՝ սպիրոխետը, որն արագազարվում է հիվանդի բաց խոցերից կամ մաշկային ցաներից ու թափանցում նոր գոհի օրգանիզմ սեռական օրգանների, բերանի և հեղուկների լորձաթաղանթի կամ մաշկի վնասված մասերի միջոցով: Եթե սիֆիլիսով հիվանդ է հղի կինը, ապա նա կարող է իր երեխային վարակել ներարգանդային ճանապարհով, և երեխան կարող է ծնվել բնածին արտաբերված:

Սիֆիլիսով վարակման առաջին նշանը վարակի ներթափանցման արդյունքում ոչ մեծ, անցավ, ամուր հիմքով էրոզիայի (լորձախախտի) կամ խոցի՝ շանկրի հայտնվելն է, որը խիստ վարակիչ է, և եթե ժամանակին բուժում չի արվում, ապա մանրէները տարածվում են բոլոր օրգաններով ու համակարգերով: Ժամանակին հայտնաբերման դեպքում սիֆիլիսը լիովին բուժելի է:

## 5. Ինչ հիվանդություն է գոնոռեան

Վաղուց ի վեր հայտնի այս սեռավարակի հարուցիչը սուրճի հատիկի նման մանրէ է և կոչվում է «Նեյսերի գոնոկոկ», որը առողջ մարդու օրգանիզմ է թափանցում դրանով ախտահարված մարդու հետ սեռական շփումների ճանապարհով: Երբեմն գոնոռեան փոխանցվում է սպիրակեդենի, սպունգի կամ այլ առարկաների միջոցով, որոնցից օգտվել է հիվանդը: Վարակման պահից սկսած մինչև հիվանդության առաջին նշանների հայտնվելը փոխանցվում է մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ:

*Տղամարդկանց մոտ* գոնոռեայի նշանները տարբերվում են: Սկզբում հնարավոր են ծակոցներ և քոր միզուկի շրջանում, ինչպես նաև թեթևակի ցավոտություն միզարձակության ժամանակ: Այնուհետև հայտնվում են լորձային, իսկ հետո նաև թարախային արտազարուկներ միզուկից: Եթե այդ ընթացքում հիվանդը բուժում չի ստանում, ապա ծակոցներն ու ցավերն ուժեղանում են, արտա-

զարուկները դառնում են առաք, և միզարձակության ժամանակ կարող է նույնիսկ արյուն հայտնվել: Անորձիների հավելուկների ախտահարման դեպքում դիտվում է մարմնի ջերմության բարձրացում և սուր ցավ փոշտի շրջանում:

*Կանանց մոտ* գոնոռեան ավելի մեղմ է ընթանում, իսկ երբեմն էլ նույնիսկ աննկատ: Դիտվում են հեշտոցային թարախային արտազարուկներ, աննշան ցավային զգացողություններ և այրոցի զգացում միզարձակության ժամանակ, անսովոր արյունային արտազարուկներ հեշտոցից, ցավեր որովայնի ստորին հատվածում: Բերանի միջոցով վարակման դեպքում հնարավոր է ցավ կոկորդում: Սակայն հաճախ հիվանդությունն ընթանում է առանց որևէ ախտանշանի: Այնուամենայնիվ, այդ դեպքում ևս հիվանդները կարող են վարակել իրենց զուգընկերներին: Կլինիկական ախտանշանների հայտնվելու դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել բժշկի և ստանալ բուժում, հակառակ դեպքում այդ հիվանդությունը ստանում է խրոնիկական բնույթ՝ հանգեցնելով անդարձելի հետևանքների:

## 6. Ինչ հիվանդություններ են խլամիդոզը և ուրեապլազմոզը

Խլամիդոզը և ուրեապլազմոզը տարածված սեռավարակների խմբին են պատկանում և հաճախ համակցվում են միմյանց հետ: Դրանցով կարելի է ախտահարվել վարակված մարդու հետ սեռական շփման ժամանակ: Խլամիդային վարակը կարող է նաև հիվանդի արտաթորանքով աղտոտված ձեռքերի միջոցով փոխանցվել աչքերին: Խլամիդոզի և ուրեապլազմոզի կլինիկական նշանները հիմնականում համանման են և բնորոշվում են՝ տղամարդկանց մոտ՝ միզուկի արտազարուկներով, կանանց մոտ՝ հեշտոցային չափից շատ կամ անսովոր արյունային արտազարուկներով և ցավերով որովայնի ստորին հատվածում: Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մոտ կարող է նաև նկատվել ցավոտ միզարձակություն կամ այրոցի զգացողություն միզարձակության ժամա-

նակ: Սակայն հաճախ հիվանդությունն ընթանում է առանց որևէ ախտաբանականի: Այնուամենայնիվ, այդ դեպքում ևս հիվանդները կարող են վարակել իրենց գույզընկերներին:

## 7. Ինչ հիվանդություն է փրիխտոմոնասը

Տրիխտոմոնասի հարուցիչը փրիխտոմոնադան է՝ մարրականման միաբջջյան մանրէն: Տրիխտոմոնադները արագորեն ոչնչանում են չոր պայմաններում, սակայն խոնավ միջավայրում (խոնավ սրբիչ, թաց սպիտակեղեն, սպունգ և այլն) նրանք պահպանում են իրենց կենսունակությունը 1-2 ժամվա ընթացքում: Այդ իսկ պարճառով չի բացառվում նաև վարակման կենցաղային ուղին: Տրիխտոմոնասի կլինիկական ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակումից հետո առաջին շաբաթվա ընթացքում, սակայն երբեմն գաղտնի շրջանը կարող է րևել մինչև 3 շաբաթ:

*Տղամարդկանց մոտ* սովորաբար ախտանշանները քիչ են, կամ դրանք ընդհանրապես բացակայում են, այդ իսկ պարճառով հիվանդներից շատերը նույնիսկ չգիտեն իրենց վարակման մասին: Սակայն նրանք կարող են ունենալ քորի և այրոցի զգացում, միզուկից արքազարուկներ:

*Կանանց մոտ* դիտվում են սպիտակավուն կամ դեղնավուն փրփրալից արքազարուկներ սեռական օրգաններից, հաճախ քիչ հոտով: Արքազարուկներն առաջացնում են սեռական օրգանների գրգռվածություն, ինչն արտահայտվում է հեշտոցի լորձաթաղանթի կարմրությամբ, քորի և այրոցի զգացողությամբ, իսկ երբեմն էլ շեքի շրջանի այրուցվածությամբ և ցավոտությամբ՝ քրաքառվելով դեպի ուղիղ աղիք:

Միզուղիների վարակի վերելուց զարգացման դեպքում երկու սեռի անձանց մոտ էլ հնարավոր է փրիխտոմոնադային ցիստիտի, պիելիտի կամ պիելոնեֆրիտի առաջացում:

## 8. Ինչ են սեռական գորտնուկները

Սեռական գորտնուկները, որոնք այլ կերպ կոչվում են նաև սրածայր կոնդիլոմաներ, հայտնվում են սեռական օրգանների շրջանում «մարդու պապիլոմավիրուս» անունը կրող վիրուսով ախտահարվելու հետևանքով: Դրանք իրենցից ներկայացնում են առանձին կամ բազմաթիվ մանր մաշկային գոյացություններ, որոնք հայտնվում են փղամարդկանց մոտ առնանդամի գլխիկի վրա կամ նրա հիմքին մոտ և շատ հազվադեպ փոշրի վրա, իսկ կանանց մոտ՝ հեշտոցամուտքի շուրջը կամ հեշտոցում, ինչպես նաև սեռական շուրթերի, շեքի կամ հետույքամաշկի վրա: Վարակման պահից մինչև հիվանդության առաջին նշանների ի հայտ գալը րևում է երեք շաբաթից մինչև ութ ամիս:

## 9. Ինչ հիվանդություն է սեռական հերպեսը

Սեռական հերպեսը խիստ վարակիչ հիվանդություն է, որի հարուցիչը «հերպես սիմպլեքս» կոչվող վիրուսն է: Վարակման վաղ փուլում հիվանդը զգում է միայն քոր կամ այրոց սեռական օրգանների շրջանում կամ ցավոտություն միզարձակման ժամանակ: Երբեմն դիտվում են գրիպի նշաններ կամ այրուց աճուկային շրջանում, սակայն հաճախ հիվանդությունն ընթանում է առանց որևէ ախտաբանականի: Վարակումից որոշ ժամանակ (2-20 օր) անց կարող են հայտնվել մանր բշտիկներ սեռական օրգանների շրջանում, որոնք արագորեն պարօվում են և վերածվում ցավոտ մանր խոցերի: Խոցերը, սովորաբար, մեկ շաբաթվա ընթացքում ինքնուրույն լավանում են, սակայն, չնայած կլինիկական ախտանշանների անհետանալուն, վիրուսը շարունակում է գոյարևել օրգանիզմում, և հիվանդությունը ժամանակ առ ժամանակ սրվում է:

## 10. Ինչպես պաշտպանվել սեռավարակներից

Սեռավարակները կանխելու լավագույն միջոցներից մեկը պահպանակի օգտագործումն է: Դրանք պետք է օգտագործել բոլոր

այն դեպքերում, երբ չկա համոզվածություն, որ գույքը վարակված չէ:

Խուսափել՝

- պարահասան սեռական կապերից,
- մեկից ավելի գույքեր ունենալուց,
- առանց պահպանակի արքանուսնական սեռական հարաբերություններ ունենալուց,
- չախտահանված ներարկիչների և ասեղների օգտագործումից:

### **ՆԻՇԵ՛Ք**

***Սեռավարակները շար ավելի հեշտ է կանխարգելել, քան բուժել:***

Ինքնաբուժումը վրանգավոր է: Դուք կարող եք սխալ բուժում իրականացնել, հիվանդության ախտանշանները կարող են անհետանալ, իսկ հիվանդությունը կմնա չբուժված և կհանգեցնի սեռական ու վերարտադրողական համակարգերի լուրջ խանգարումների:

### **11. Ինչ է ՄԻԱՎ-ը**

**ՄԻԱՎ-ը** Մարդու իմունային անբավարարության վիրուս բառակապակցության հապավումն է, որը համարվում է ՁԻԱՆ-ի հարուցիչ: Վարակն ախտահարում և քայքայում է արյան սպիտակ գնդիկների CD<sub>4</sub> լիմֆոցիտները, որոնք վճռական դեր են խաղում իմունային համակարգն առողջ պահելու գործում: Այդ վիրուսի՝ օրգանիզմ ներթափանցման պահից մարդը դառնում է վարակակիր: Վարակակիրներն սկզբնական շրջանում վիրուսակրության փասանելի նշաններ չունեն, սակայն վարակման պահից նրանք կարող են վիրուսը փոխանցել ուրիշներին: Վիրուսակրության շրջանը կարող է փակվել 8-10 փարի, մինչև որ ՄԻԱՎ-ի զարգացումը կհանգեցնի վարակի վերջնական փուլին՝ ՁԻԱՆ-ին:

### **12. Ինչ է ՁԻԱՆ-ը**

**ՁԻԱՆ-ը** Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հապավումն է: ՁԻԱՆ-ն առաջանում է ՄԻԱՎ վարակով հարուցված իմունային համակարգի ընկճման հետևանքով: ՁԻԱՆ-ը վարակի վերջնական փուլն է, երբ մարդու մոտ ի հայտ են գալիս հիվանդության նշանները՝ բնորոշ նաև բազմաթիվ այլ հիվանդություններին և վարակներին, և որոնց դեմն առնելը դժվարագույն կամ անլուծելի խնդիր է:

### **13. Որոնք են հիվանդության նշանները**

**ՄԻԱՎ** կրողներից շատերը նորմալ փեսք ունեն և իրենց փկար չեն զգում: Ի դեպ, մարդը կարող է լինել ՄԻԱՎ-ի կրողը և կարող է անգամ չիմանալ, որ վարակված է այդ վիրուսով: ՄԻԱՎ վարակակիրների մեծ մասի մոտ ՁԻԱՆ-ն առաջին հինգ փարիների ընթացքում չի դրսևորվում: Առավել հանդիպող ախտանշաններն են հոգնածության մշտական զգացողությունը, ախորժակի բացակայությունը, գիշերային քրտնարտադրությունը, փենդը, քաշի հանկարծախաս արագ անկումը, փորլուծությունները, համատ հազը, մաշկային ցաները, բերանի խոռոչի խոցերը, նաև ավշային հանգույցների մեծացումը և մի շարք այլ երևույթներ: Մակայն այդ ախտանշանների առկայությունը հնարավոր է նաև այլ հիվանդությունների դեպքում ու դեռևս չի նշանակում, որ դա ՁԻԱՆ է: ՁԻԱՆ-ի կլինիկական արտահայտությունների փուլում միակցվում են փարբեր վարակային և ուռուցքային հիվանդություններ, օրինակ՝ թոքերի բորբոքում, մաշկի քաղցկեղային ախտահարում և այլն:

### **14. Ինչպես իմանալ վարակման մասին**

Վարակվելուց հետո շար շուրով իմուն համակարգը սկսում է արտադրել հակամարմիններ՝ ջանալով չեզոքացնել վիրուսը: Դրանք հեշտությամբ բացահայտվում են արյան լաբորատոր հե-

տրագործության ժամանակ, որն իրականացվում է վարակման հավանական պահից առնվազն 3 ամիս անց: Կասկածելի արդյունքի դեպքում քննությունը կրկնվում է վարակումից հետո մոտ վեց ամիս անց: Ընդ որում, քննության արդյունքը գաղտնի է պահվում: Եթե որևէ մեկին հայտնվում է, ապա միայն հիվանդի թույլտվությամբ:

### 15. Ինչպես է փոխանցվում ՄԻԱՎ-ը

ՄԻԱՎ-ը փոխանցվում է.

- չպաշտպանված սեռական հարաբերությունների ժամանակ, երբ գուցընկերներից մեկը վարակված է ՄԻԱՎ-ով,
- չախտահանված ներարկիչներով կամ ասեղներով թմրանյութեր օգտագործելիս,
- չախտահանված ներարկիչներով, ասեղներով կամ բժշկական այլ պարագաներով բժշկական միջամտություն կատարելիս,
- վարակված դոնորական արյան փոխներարկման միջոցով,
- ՄԻԱՎ-վարակակիր կամ ՁԻԱՆ-ով հիվանդ մորից պտղին՝ հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ կամ նորածնին կրծքով կերակրելիս:

### 16. Երբ ՄԻԱՎ-ը չի փոխանցվում

ՄԻԱՎ-ը չի փոխանցվում.

- վարակված անձանց հետ միևնույն սենյակում գտնվելիս կամ նրան խնամելիս,
- օդի միջոցով՝ վարակված մարդու հագալու կամ փռչալու պահին նրա կողքին գտնվելիս,
- սննդամթերքի, խմիչքի միջոցով,
- ընդհանուր սպասքից և այլ կենցաղային առարկաներից օգտվելիս,
- ընդհանուր սանհանգույցից, լոգարանից, լողավազանից օգտվելիս,

- հասարակական տրանսպորտից և հեռախոսից օգտվելիս,
- ընտանի կենդանիների հետ շփվելիս,
- միջատների կծելու դեպքում,
- մարմնիկ համբույրների միջոցով:

### 17. Ինչպես պաշտպանվել վարակից

ՁԻԱՆ-ը կանխելու լավագույն միջոցներից մեկը պահպանակի օգտագործումն է: Այն պեք է օգտագործել բոլոր այն դեպքերում, երբ չկա համոզվածություն, որ գուցընկերը վարակված չէ:

#### *Խուսափե՛ք.*

- պատահական սեռական կապերից,
- մեկից ավելի գուցընկեր ունենալուց,
- առանց պահպանակի արտամուսնական սեռական հարաբերություններ ունենալուց,
- չախտահանված ներարկիչների և ասեղների օգտագործումից:

#### *ՆԻՇԵ՛ք*

*ՁԻԱՆ-ը շատ ավելի հեշտ է կանխարգելել, քան բուժել:*

## 18. Ինչպես սրանալ օգնություն և տեղեկատվություն

Եթե Ձեզ անհրաժեշտ է սրանալ սեռավարակների և ՄԻԱՎ/ՁԻԱՆ-ի վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, դիմե՛ք փորձառու բժիշկ-մասնագետի կամ Երևանում գործող «Նանուն ընդանիքի և առողջության» համահայկական ասոցիացիայի երիտասարդական կենտրոն: Կենտրոնի վերապարաստված խորհրդատուներն ու ուսուցանողները Ձեզ կտրամադրեն տեղեկատվություն և խորհրդատվություն: Նրանք կարող են ցուցաբերել Ձեզ իրենց օգնությունն ու խնամքը: Նանդիպում նշանակելու համար զանգահարե՛ք՝ **(374 10) 52-61-87, 65-36-65** կամ այցելե՛ք.

Երևան, Վարդանանց փ. 14/1  
Էլ. փոստ՝ [armfha@netsys.am](mailto:armfha@netsys.am)

Նարավային Կովկասում Երիտասարդության Վերարտադրողական Առողջության Նախաձեռնությանը մանրամասն ծանոթանալու համար դիմե՛ք մեր կայքին՝ [www.4uth.am](http://www.4uth.am):